ՏԵՂԱԿԱԳԻՐ Ա. Բ. Գ. Դ. 1912

(Вѣдомость А. Б. В. Г.)

Ներքին գործոց նախարարութեան կարգադրութեամբ Էջմիածնի Սինոդը պարտաւոր է իւրաքանչիւր տարի կազմել և ներկայացնել կառավարութեան մի տեղեկագիր, որ բաղկացած է լինում չորս մասից և իւրաքանչիւր մասը կրում է վերոյիշեալ մի տառի անունը։ Այսպէս. Ա. մասը պարունակում է վիճակագրական տեղեկութիւններ մեր թեմերում գտնուած եկեղեցիների, վանքերի, ծխականների, հոգևոր դպրոցների և աստուածաշունչ հիմնարկութիւնների մասին. Բ. մասը վերաբերում է կուսակրօն և ամուսնացած հոգևորականութեան։ Գ. մասի մէջ մտնում է մեր եկեղեցիների շարժական և անշարժ կայքերի, եկեղեցիների ունեցած դրամագլխի վիճակագրութիւնը։ Դ. մասը տեղեկութիւններ է տալիս վանքերի անշարժ և շարժական կայքերի ու դրամագլխի մասին։ Տեղեկագիրը կազմուում է հետևեալ կերպով. իւրաքանչիւր վիճակային առեան (Կոնսիստորիա) իր առորադրեալ հոգևոր առեաններին և անձանց միջոցով քաղում է չափաբերական մատեաններից, հաշուէ-մատեաններից և ծխատէր քահանաների կազմած ցուցակներից վերոյիշեալ Ա. Բ. Գ. Դ. մասերի տեղեկութիւնները և ներկայացնում ս. Սինոդին, որն էլ իւր կողմից ուղարկում է ներքին գործոց նախարարութեան։

Այս տեղեկագիրը իր բոլոր պակասութիւններով հանդերձ, մեր կարծիքով, անհրաժեշտ է ընթերցող հասարակութեան առաջ դնել, որովհետև դրանից կը պարզուի նախ՝ թէ իւրաքանչիւր թեմ ինչ վիճակի մէջ է գտնուում, քանի եկեղեցի կայ այս կամ այն գաւառում, քանի ծխական, և երկրորդ՝ թէ եկեղեցիները ինչքան արդիւնք (եկամուտ) և ծախս ունեն։

Առաջ ենք բերում Ա. Բ. Գ. Դ. մասերի վիճակագրական տեղեկութիւնները ըստ թեմերի կարգով։ Իւրաքանչիւր գաւառի, կամ քաղաքի վիճակագրութիւնը տալով կաւելացնենք և մեր դիտողութիւնները։

Ա. Երեւանի թեմ.

1. Երեւան քաղաքում կան 7 եկեղեցի, 16 քահանայ, 4500 արական և 4040 իգական ծխական. բոլորը 8540 ծխական. արականը իգականից շատ է 460-ով։ Կայ մի եպիսկոպոս, 1 թեմական դպրոց, 365 աշակերտով և 18 ուսուցչով։ 7 եկեղեցին միասին ունին անշարժ կայքերից տարեկան մուտք 3969 ռ. 93 կ. տարեկան ելք 6943 ռ. 92 կ.[1]։

2. Երեւան գաւառի 68 գիւղում—70 եկեղ. 75 քահանայ, 26818 արական., 23517 իգ. ծխական. բոլորը 50335 ծխակ. արականը իգականից շատ է 3301-ով։ Բոլոր գիւղերն էլ ունեն եկեղեցի։ 70 եկեղեցին միասին անշարժ կայքերից տարեկան մուտք են ստանում 6961 ռ. 38 կ., իսկ տարեկան ելք 8004 ռ. 9 կ.։

3. Հին Նախիջեւան քաղաքում—3 եկեղեցի, 1 վարդապետ և 2 քահանայ, 671 ար. և 621 իգ. ծխական. բոլորը 1292 ծխական, արականը իգականից շատ է 50-ով։ 3 եկեղեցին միասին ունեն եկամուտ 2188 ռ. իսկ ելք (ծախս) 1250 ռ. 3 կ.։

4. Նոյն գաւառի Օրդուբաթ քաղաքում—1 եկեղ. 1 քահան. 68 ար. և 64 իգակ. ծխական. բոլորը 132 ծխ.։ Եկեղեցու եկամուտն է 36 ռ., ծախսը 24 ռ.։

5. Հին-Նախիջեւանի գաւառի 70 գիւղում—75 եկ., 7 վանք[2], 58 քահ., 25927 ար. ծխ. և 23713 իգ. ծխակ. բոլորը 49640 ծխական. արականը իգականից շատ է 2214-ով։ 75 եկեղեցին անշարժ կայքերից մուտք ունին 4591 ռ. 38 կ. իսկ ծախս 3442 ռ. 81 կոպ.։

Շարուր-Դարալեազեազի գաւառի 26 գիւղ ունին 24 եկեղ.

---

1) Պիտի ասենք, որ Երեւանի թեմի տեղեկագրի մէջ չկայ տեղեկութիւն, թէ եկեղեցիները եւ վանքերը ի՞նչքան դրամագլուխ ունեն, այն ինչ միւս բոլոր թեմերի տեղեկագրերը ունեն տեղեկութիւններ այդ մասին։ Այդ պատճառով էլ մենք չունենք յիշուած Երեւանի թեմի այս կամ այն եկեղեցու ու վանքի դրամագլխի մասին տեղեկութիւն։

2) Վանքերի հաշիւները, այսինքն Դ. մասը, այժմ չենք բերում, որովհետեւ լրիւ չկայ բոլոր թեմերի. այդ աշխատանքը մենք կանենք մի ուրիշ անգամ վանքերի ունեցած կալուածների, հողերի, այգիների եւայլն մի առանձին տեղեկագրով եւ բացատրութիւններով։

28 քահ., 9247 աբ. և 8035 իգ. ծխ. բոլորը 17282 ծխական. արականը իգականից շատ է 1212-ով։ Եկեղեցի չունեն Քիւրտագի և Սոյլանեի գիւղերը։ Սոյլանէ գիւղի բնակիչների թիւը չի բերուած։ 24 եկ. միասին եկամուտ ունեն 979 ռ. 50 կ. իսկ ելք 610 ռ. 36 կոպ.։

7. Այիֆսանդրապոլ քաղաքը ունի 4 եկ., 16 քահ., 17895 աբ. և 15828 իգ. ծխ. բոլորը 33723 ծխակ. արականը իգականից շատ է 2067-ով։ 4 եկ. եկամուտն է 26256 ռ. 3 կ. իսկ ելք 25388 ռ. 35 կոպ.։ Միայն նշանաւորը և հարուստ ս. Աստուածածին եկեղեցու տերական եկամուտը հասնում է 12310 ռ., նոյնքան էլ ելքն է, իսկ ս. Փրկիչ եկեղեցին ունի 12236 ռ. եկամուտ և 11309 ռ. 56 կ. ելք։

8. Նոյն գաւառի 126 գիւղում—122 եկ., 138 քահ., 72541 աբ. և 66439 իգ. ծխ. բոլորը 138,980 ծխակ. արականը շատ է իգականից 6102-ով։ Եկեղեցիները չունեն հետևեալ չորս գիւղերը. 1) Հայկուլի-Դիւզքեանդ, 2) Գեալին-Հայ, 3) Փոքր Բանդիվան և 4) Հասումալի։ Ցիշուած I-ին, II և IV գիւղերի ծխականների թիւը չի բերուած։ 122 եկ. եկամուտն է 8418 ռ. 18 կ., իսկ ելքը 6222 ռ. 20 կ.։

9. Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի 65 գիւղում—78 եկ. 66 քահ., 3 վարդապետ, 41912 աբ. և 33517 իգ. ծխ. բոլորը 75429 ծխական. արականը շատ է իգականից 8395-ով։ 78 եկեղեցին միասին ունեն եկամուտ 2426 ռ. 76 կ., իսկ ելք 1904 ռ. 7 կոպ.։

10) Սուրմալի գաւառի 22 գիւղում—23 եկ., 23 քահանայ, 16597 աբ. և 14929 իգ. ծխակ. բոլորը 31526 ծխ. արականը շատ է իգականից 1668-ով։ 23 եկեղեցու անշարժ կալքերից ստացած եկամուտն է 2218 ռ. 38 կ. իսկ ելքը 1393 ռ. 44 կ.։

11. Էջմիածնի գաւառի 91 գիւղում 96 եկ., 3 վանք, 122 քհ., 46153 աբ. և 41402 իգ. ծխ. բոլորը 87555 ծխական. արականը իգականից շատ է 4751-ով։ 94 եկեղեցին մուտք ունի 4292 ռ. 99 կ. ելք՝ 3312 ռ. 27 կ.։

12. Նոր-Բայազետի գաւառի Նոր-Բայազետ քաղաքում—2 եկ., 8 քահ., 5118 աբ. և 4640 իգ. ծխ. բոլորը 9758 ծխակ. արականը իգականից շատ է 478-ով։ 2 եկ. եկամուտն է 719 ռ. 42 կ. իսկ ելքը 918 ռ. 71 կ.։

13. Նոր Բայազետի գաւառի 57 գիւղում—60 եկ., 2 վանք, 84 քահ., 50509 աբ. և 45711 իգ. ծխ. բոլորը 96220 ծխակ. արականը շատ է իգականից 4798-ով։ 60 եկեղեցու անշարժ կալքերից ստացած եկամուտն է 2458 ռ. 63 կ. իսկ ելքը՝ 2644 ռ. 58 կոպ.։

14. Կարսի շրջանի Կարս քաղաքում—2 եկ., 8 քահ., 9110 ար. և 8099 իգ. ծխ. բոլորը 17209 ծխ., արականը շատ էի դակաչնից 1011-ով։ 2 եկ. եկամուտը 1928 ռ. 79 կ. և եկեղն էլ 1908 ռ. 13 կոպ. է։

15. Կարսի շրջանի 90 գիւղում—90 եկ., 1 վանք, 86 քահ., 33878 ար. և 32598 իգ. ծխ. բոլորը 66476 ծխական. ար. շատ է իգ. 1280-ով։ Զուտեն եկեղեցի 1) Հոքամ և 2) Օլարէ գիւղերը։ Կարսի շրջանի մէջ մնացող քաղաքների (փոքր) ծխականների թիւը հետևեալն է, 1) Սարիղամիշ՝ 1074 ար. և 854 իգ. գում. 1928 ծխ. 2) Օլթի 575 ար. և 541 իգ. ծխ. գում. 1116 ծխ. 3) Կաղզվան՝ 2990 ար. 2220 իգ. գում. 5210 ծխ. 4) Արդահան 1340 ար. 1321 իգ. բոլորը 2661 ծխ.։ Այս թուերը հաշուած են ընդհանուր գումարի հետ։ 90 եկեղեցին անշարժ կայքերից եկամուտ է ստանում 4058 ռ. 63 կ. իսկ եկեղ 3573 ռ. 91 կոպ.։

Ամբողջ Երևանի թեմում

Այսպէս ուրեմն. ամբողջ Երևանի թեմում կայ 657 եկ., որից 24 քաղաքի եկեղեցիներ են, իսկ մնացածը (633) գիւղական, 13 վանք, 721 քահանայ, որից 55 քաղաքների քահանաներ են, իսկ մնացածը (666) գիւղական։ Քաղաքաբնակ ընակիչների թիւն է (Երևան, Ալէքսանդրապօլ, Կարս, Նոր-Բայազէտ, Հին-Նախիջևան, Արդահան, Օրդուբաթ, Սարիղամիշ, Օլթի և Կաղզվան)՝ 43341 ար. և 38228 իգ. ծխական, բոլորը 81569 ծխակ. իսկ 615 գիւղերի ծխականների թիւն է՝ 318603 ար. և 284926 իգ. ծխ., համադումարը 602529 ծխական։ Քաղաքաբնակ և գիւղաբնակ ծխականների թիւն է 361944 արական և 323154 իգ. ծխ. բոլորը 685098 ծխ.։

657 եկեղեցիների անշարժ կայքերից տարեկան ստացած եկամուտը 71504 ռ. է, իսկ եկեղ 66498 ռ. 12 կ. որից քաղաքի եկեղեցիներին ընկնում է մուտք 36652 ռ. 77 կ. իսկ եկեղ 37693 ռ. 26 կ.։ Մինչև թուով մի եկեղեցուն ընկնում է 1042 ծխ. մի քահանայի՝ 950 ծխ. իսկ մի գիւղը մինչև թուով բաղկացած է 947 ծխականից։ Թեմը ունի մի թեմական դպրոց 18 ուսուցչով և 365 աշակերտով։

Բ. Վրաստանի եւ Իմէրէթի թեմ.

1. Թիֆլիս քաղաքում—26 եկեղեցի, 55 քահ. 13 կոյսեր, մի եպիսկոպոս, 68248 ար. և 55139 իգ. ծխ. բոլորը 123387 ծխական, արականը իգականից շատ է 13109-ով։ Եկեղեցիների

դրամագլուխը 43118 ռ. 69 կ. անշարժ կայքերից ստացած արդիւնքը 27661 ռ. ելքը՝ 29166 ռ. 25 կ.[1]։ Կայ մի թեմական դպրոց 27 ուսուցչով և 447 աշակերտով։

2. Տփխիսի գաւառի 41 գիւղում կայ 45 եկ., եկեղեցի չունեն 1) Նաւնաբադ և 2) Վանեան գիւղերը, մի վանք, 16 քահանայ, 2 վարդապետ։ 36 գիւղի (դուրս եկած 41-ից 15 գիւղ, որովհետև այս 15 գիւղերի ծխականների թիւը չի բերուած), ծխականների թիւն է 10638 արս. և 9160 իգ. ընդորդը 19798 ծխ. արականը իգականից շատ է 1478-ով։ Բոլոր եկեղեցիները միասին ունեն 9604 ռ. 43 կ. դրամագլուխ, մուտք անշարժ կայքերից 2163 ռ. 77 կ. ելք՝ 3185 ռ. 38 կ.։

3. Բորչալուի գաւառի 52 գիւղում կայ 54 եկեղեցի, 1 վանք, 45 քահ. 28695 արս. ծխ. և 25218 իգ. ծխ. ընդորդը 53913 ծխակ. արականը իգականից շատ է 3477-ով։ Եկեղեցիների դրամագլուխն է 2829 ռ. 10 կ. մուտքը 2130 ռ. 36 կ. ելքը 1316 ռ. 14 կոպ.։

4. Թուշեթի գաւառի Թուշեթ քաղաքում—2 եկ., 1 քահն., 203 արս. և 206 իգ. ծխ. ընդորդը 409 ծխակ.։ Դրամագլուխ (?)[2] մուտքը 306 ռ. 1 կ. ելքը 309 ռ.։

5. Թուշեթի գաւառի 6 գիւղում—կայ 7 եկեղեցի (եկեղեցի չունի Զեդիսջվաբ գիւղը), 5 քահ., 1521 արս. և 1211 իգ. ծխ. ընդորդը 2732 ծխական, արականը իգականից շատ է 310-ով երկու գիւղի ծխականների թիւը պակասում է)։ Եկեղեցիների դրամագլուխն է 292 ռ. 5 կ. մուտքը 488 ռ. 9 կ. ելքը 414 ռ. 84 կոպ.։

6. Գորի գաւառի Գորի քաղաքում—3 եկ., 4 քահ., 1672 արս. և 1459 իգ. ծխ. ընդորդը 3131 ծխ. արականը իգականից շատ է 213-ով։ Դրամագլուխն է եկեղեցիների 826 ռ. 68 կ. անշարժ կայքերից ստացած արդիւնքը տարեկան 2309 ռ. 51 կ. իսկ ելքը 1482 ռ. 83 կ.։

7. Գորի գաւառի 19 գիւղում կայ 18 եկ. 18 քահ.[3]), (Դերբէ

---

1) Այս հաշուի մէջ չի մտած երեք եկեղեցիների (1) Խոջեվանք, 2) Ս. Աստուածածին, 3) Ս. Գէորգ) դրամագլխի, արդիւնքի եւ ելքի հաշիւները. որովհետեւ այս երեք եկեղեցիները պատկանում են Բերուդեաններին, որոնց հաշուով էլ պահւում են։ Իսկ Ս. Սարգիս եւ միւս Ս. Գէորգի տեղեկագիրը չի բերուած։

2) Որտեղ որ հարցական է դրուած, նշանակում է. որ տեղեկագրի մէջ չի եղել տեղեկութիւն։

3) Ոչ մի Թեմի եկեղեցու սպասաւորների թիւը չենք բերել, չնայած

գիւղը չունի եկեղեցի)։ ար. ծխակ. թիւը 8663, իգ. 7551. բոլորը 16214 ծխ. արականը իգականից շատ է 1112-ով։ Եկեղեցիների դրամագլուխը 5133 ռ. 9 կոպ. է, անշարժ կայքերից ստացած մուտքը 2881 ռ. 43 կ. ելքը 2043 ռ. 15 կ.։

8. Թելու գաւառի Թելու քաղաքում կայ 6 եկ., 6 քահ., 2538 ար. և 2398 իգ. ծխակ. բոլորը 4936 ծխ. արականը աւելի է իգականից 140-ով։ 6 եկ. ունի 3662 ռ. 82 կ. դրամագլուխ, մուտք 1024 ռ. 26 կ. ելք 597 ռ. 1 կոպ.։

9. Թելու գաւառի 17 գիւղում կայ 9 եկ., 12 քահ., (եկեղեցի չունեն 8 գիւղ, որոնք հետևեալներն են. ա) Մագանէ, բ) Կիսաաուրէ, գ) Սանիօրէ, դ) Նապարէուլէ, ե) Լիսիսգուրէ, զ) Շակրիանէ, է) Տուրիսցիխէ, ը) Փաշանէ)։ 2612 ար. և 2239 իգ. ծխ. բոլորը 4851 ծխ. (չի բերուած մի գիւղի ծխականների թիւը), արականը աւելի է իգականից 373-ով։ Եկեղեցիներն ունեն դրամագլուխ 974 ռ. 77 կ. մուտք 377 ռ. 79 կ. և ելք 370 ռ. 79 կ.։

10. Սղնախ գաւառի Սղնախ քաղաքը ունի 3 եկ., 6 քահ., ծխականների թիւը չի բերուած։ 3 եկ. ունեն 208 ռ. 10 կ. դրամագլուխ, մուտք 672 ռ. 92 կ. և ելք 535 ռ. 67 կ.։

11. Նոյն գաւառի Զակատալա քաղաքը ունի 1 եկ., 1 քահ., 875 ար. և 780 իգ. ծխ. բոլորը 1655 ծխական. արականը շատ է իգականից 95-ով։ Եկեղեցին ունի 1261 ռ. 39 կոպ. դրամագլուխ. մուտք 165 ռ. 62 կ. ելք 219 ռ. 53 կ.։

12. Նոյն գաւառի 12 գիւղում կայ 12 եկ., 7 քահ., միայն մի գիւղի արական և իգական ծխականների թիւն է բերուած, այն է Լազոդեխի ար. 235, իգ. 217. բոլորը 452 ծխ., իսկ մնացած 11 գիւղից և ոչ մէկ գիւղի ծխականների թուի մասին տեղեկագրում չի յիշուած։ Եկեղեցիները ունեն դրամագլուխ 716 ռ. 70 կ. մուտք 346 ռ. 47 կ. և ելք 461 ռ. 13 կ.։

13. Ախալցխա գաւառի Ախալցխա քաղաքը ունի 4 եկեղ., 6 քահ., 4725 ար. և 4420 իգ. ծխակ. բոլորը 9145 ծխական. արականը աւելի է իգականից 305-ով։ Եկեղեցիների դրամագլուխը 1715 ռ. 92 կ. է, մուտքը 22374 ռ. 10 կ. իսկ ելքը 20734 ռ. է, միայն ս. Փրկիչ եկեղեցին, որ ամենից հարուստն է, ունի 19801 ռ. մուտք անշարժ կալուածներից և 19801 ելք։

14. Ախալցխա գաւառի 10 գիւղում—10 եկ., 5 քահ., 2515 ար. և 2130 իգ. ծխ. բոլորը 4645 ծխական. արականը իգա-

---

որ տեղեկագրում յիշուած են. որովհետև շատ տեղերինը չի յիշուած, կամ թէ սպասաւոր բառի տակ հասկացել են և՛ տիրացուներին, և՛ մոմավաճառներին և՛ ժամկոչներին։

կանից աւելի է 285-ով։ 10 եկեղեցու դրամագլուխը է 2720 ռ. 76 կ. մուտքը 7127 ռ. 2 կ. ելքը 1868 ռ. 27 կ։

15. Ախալքալաք գաւառի Ախալքալաք քաղաքում կայ 1 եկ., 3 քհ. 2990 ար. և 2654 իգ. ծխ., բոլորը 5644 ծխական. արականը աւելի է իգականից 336-ով. եկեղեցու դրամագլուխը 216 ռ. 13 կ. է, մուտքը անշարժ կալքերից 5437 ռ. 74 կ. ելքը 5713 ռ. 15 կոպ.։

16. Ախալքալաք գաւառի 57 գիւղում կան 57 եկ., 49 քահ., 32870 ար. և 29312 իգ. ծխ. բոլորը 62182 ծխ. արականը իգականից աւելի է 3558-ով։ 57 եկեղեցու դրամագլուխը 22712 ռ. 56 կ. է, մուտք 2206 ռ. 3 կ. ելքը 2319 ռ. 99 կ.։

17. Թանձակի նահանգի եւ նոյն գաւառի Թանձակ քաղաքում 6 եկ., 12 քահ. 1 վարդապետ. 6213 ար. և 6484 իգ. ծխ. բոլորը 12697 ծխ.։ Առանձին բացառութեամբ, ինչպէս տեսնում է ընթերցողը, այս քաղաքում իգականը օտ ի արականից, այն էլ 271-ով։ 6 եկեղեցու դրամագլուխն է 29920 ռ. 77 կ. մուտքը 2369 ռ. 61 կ. ելքը 3244 ռ. 98 կ.։

18. Թանձակի գաւառի 23 գիւղում կան 23 եկ., 22 քահ., 1 վարդապետ, 14492 ար. և 11833 իգ. ծխ. բոլորը 25325 ծխական. արականը իգականից աւելի է 2659-ով։ 23 եկ. դրամագլուխը է 10002 ռ. 50 կ. մուտք 1535 ռ. 75 կ. ելք 2501 ռ. 42 կ.։

19. Ղազախ գաւառի Ղազախ քաղաքում 1 եկ., 1 քահ., ծխականների թիւը չի բերուած. եկեղեցու դրամագլուխը 160 ռ. 68 կ. մուտքը 95 ռ. 70 կ. ելքը 247 ռ. 17 կ.։

20. Նոյն գաւառի 47 գիւղում կան 51 եկ., 1 վանք, (Հաղբատ գիւղը չունի եկ., սակայն վանք կայ այնտեղ), 46 քահանայ՝ 32029 ար. և 27823 իգ. ծխ. բոլորը 59852 ծխական, (չի բերուած Հաղբատ, Բէգինբէ և Կրզէն գիւղերի ծխականների թիւը). արականը շատ է իգականից 4206-ով։ 51 եկեղեցու դրամագլուխը է 13777 ռ. 98 կ. մուտքը 1355 ռ. 32 կոպ. ելքը 1947 ռ. 50 կոպ.։

21. Քուրայիսի նահանգի եւ նոյն գաւառի Քուրայիս քաղաքում—1 եկ., 1 քահ., ծխականների թիւը չկայ։ եկեղեցին ունի դրամագլուխ 858 ռ. 54 կ. մուտք 271 ռ. 19 կ. ելք 191 ռ. 19 կոպ.։

22. Նոյն գաւառի Փոքի քաղաքում կան 1 եկ. 1 քահ., ծխականների թիւը պակասում է։ Դրամագլխի, մուտքի և ելքի հաշիւը չի բերուած։

23. Շորափանի գաւառի 2 գիւղում կան (Զխաբի և Սաչխերքի) կայ 2 եր., 2 քահ. ծխականների թիւը դաբձեալ չի բերուած։ Երկու եկեղեցիները ունեն 502 ռ. 28 կ., մուտք 337 ռ. 64 կ. ելք 354 ռ. 89 կոպ.։

24. Լեչխումի գաւառի 1 գիւղում (Լայլաշ) կան 1 եկ. 1 քահ. ծխակ. թիւը չկայ։ Դրամագլուխը 25 ռ. 12 կ. մուտք 5 ռ. 27 կ. ելքը 12 ռ. 60 կոպ.։

25. Ռաչինեաց գաւառի մի գիւղում (Օնի) կայ 1 եկ. 1 քահ. ծխակ. թիւը դաբձեալ չի բերուած։ Եկեղ. ունի դրամագլուխ 208 ռ. 82 կ., 94 ռ. 35 կ. մուտքը իսկ ելքը 121 ռ. 53 կ.։

26. Բաթումի շրջանի Բաթում քաղաքում կան 1 եկեղ., 2 քահ., 2800 աբ. և 1500 իգ. ծխ. բոլորը 4300 ծխ. արականը իգականից շատ է 1300-ով։ Եկեղ. ունի 830 ռ. 17 կ. դրամագլուխ, 35 ռ. 15 կ. մուտք, 208 ռ. 19 կ. ելք։

27. Արդուինի շրջանի Արդուին քաղաքում կան 1 եկ., 2 քահ., 802 աբ. և 769 իգ. ծխ. բոլորը 1571 ծխ. արակ. իգականից շատ է 33-ով։ Չի բերուած եկ. դրամագլուխ, մուտքի և ելքի հաշիւը։

28. Արդանուշի գաւառաբաժնի 2 գիւղում (Տանձոտ և Նորաշէն) կայ 2 եկ., 1 քահ. 595 աբ. և 580 իգ. ծխակ. բոլորը 1175 ծխ. արակ. իգականից շատ է 15-ով։ 2 եկեղ. դրամագլուխը է 1964 ռ. 93 կ. մուտքը 504 ռ. 4 կ. ելքը 518 ռ. 4 կ.։

29. Շաւշեթի գաւառաբաժնի 2 գիւղում (Զբրոմիանէտ, Սաալէլէ) կան 2 եկ., 2 քահ., 723 աբ. և 622 իգ. ծխ. բոլորը 1345 ծխ. արակ. իգականից աւելի է 101-ով։ 2 եկեղ. միասին ունեն դրամագլուխ 3347 ռ. 11 կ. մուտք 831 ռ. 63 կ. ելք 651 ռ. 91 կոպ.։

30. Սոխումի շրջանի 7 գիւղում կայ 7 եկեղ., 7 քահ., 2906 աբ. և 2303 իգ. ծխ. բոլորը 5209 ծխ. արակ. իգականից շատ է 603-ով։ 7 եկեղ. ունեն դրամագլուխ 884 ռ. 64 կոպ. մուտք 414 ռ. 13 կ. ելք 660 ռ. 82 կ.։

Ամբողջ Թիֆլիսի թեմում.

Այսպէս ուրեմն. Քաղաքային եկ. թիւն է 57, գիւղական՝ 382. բոլորը 439 եկ. քաղաքային քահ. թիւն է 101. իսկ գիւղական քահ. 239, բոլորը 340 քահ.։ Քաղաքաբնակ ծխականների թիւն է աբ. 91066 և իգ. 75809. բոլորը 166875. արականը իգականից շատ է 15257-ով։ Գիւղաբնակ ծխակ. թիւը աբ.

148494 և լդ. 120199. բոլորը 268693. աբ. լգականից շատ է 28295-ով։ Երկուսը միասին 435568 ծխ.։ Թէ՛ քաղաքաբնակ և թէ՛ գիւղաբնակ ծխականների արակ. շատ է լգ. 43552-ով։ Թիֆլիսի թեմում կայ 14 քաղաք, որոնք հետևեալներն են՝ 1) Տփխիս, 2) Դուշէթ. 3) Գորի, 4) Թելաւ. 5) Սղնախ, 6) Զաքատալա, 7) Ախալցխա, 8) Ախալքալաք, 9) Գանձակ, 10) Ղազախ, 11) Քութայիս, 12) Փոթի, 13) Բաթում, 14) Արգուին, իսկ ամբողջ թեմում գտնուող հայ գիւղերի թիւը 299-ն է։ Քաղաքային իւրաքանչիւր եկեղեցուն մինչին թւով ընկնում է 2928 ծխական, իսկ իւրաքանչիւր քաղաքի քահանայ մինչին թւով ունի 1652 ծխական։ Գիւղական իւրաքանչիւր եկեղեցուն ընկնում է մինչին թւով 700 ծխական, իսկ իւրաքանչիւր մի քահանան ունի մինչին թւով 1124 ծխ.։ Ընդհանրապէս մի եկեղեցուն մինչին թւով ընկնում է 969 ծխական, իսկ մի քահանային՝ 1822։ Քաղաքային 57 եկեղեցիները ունեն դրամագլուխ 82779 ռ. 89 կ. մուտք անշարժ կալքերից 62722 ռ. 81 կ. ելք 62648 ռ. 95 կոպ.։ Մի եկեղեցուն մինչին թւով ընկնում է դրամագլուխ 1417 ռ. 19 կ. մուտք 1100 ռ. 40 կոպ., ելք 1099 ռ. 10 կոպ.։ Գիւղական 382 եկեղեցիների դրամագլուխն է 75696 ռ. 84 կ. մուտքը 22599 ռ. 9 կ. ելքը 19748 ռ. 40 կ.։ Մի եկեղեցուն մինչին թւով ընկնում է դրամագլուխ 198 ռ. 15 կոպ. մուտք 59 ռ. 15 կոպ. ելք 51 ռ. 69 կ.։ Թէ քաղաքային (57) և թէ գիւղական (382) եկեղեցիների (439) դրամագլուխն է 158476 ռ. 73 կոպ. մուտքը 85321 ռ. 90 կոպ. ելքը 82397 ռ. 35 կոպ.։ Մինչին թւով մի եկեղեցուն ընկնում է դրամագլուխ 360 ռ. 99 կոպ. մուտք 194 ռ. 35 կոպ. ելք 187 ռ. 69 կոպ. Թիֆլիսի թեմում կայ 3 վարք 1) Հաղբատ 2) Սանահին 3) Հաւնաբատ, մի եպիսկոպոս, 4 վարդապետ, 13 կոյս, մի թեմական դպրոց 27 ուսուցչով և 445 աշակերտով։

Մ. Մինասեան

(Վերջը միւս անգամ)